Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով շտապ օգնության մեքենաների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Հուլիսի» 2019թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Արթուր Գևորգյան, Միհրան Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Հասմիկ Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 12.06.19թ. հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» հրավեր armeps համակարգում:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցեներ	Կազմակերպության ՀՎՀՀ-ն
1	«Տելիա-Մեդ» ՓԲԸ	info@telia-med.com	01203143
2	ООО "Лиртон Групп" ООО "Спец-Ком-Сервис"	Lirton_group@ukr.net	417724926509 364496210136
3	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ «Եվրոմեդփրոջեքթ» ՍՊԸ (կոնսորցիում)	Lawyer@c-e.am	01210095 36589145

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բանակցությունների վարման մասին

(Մ.Մխիթարյան)

Հաշվի առնելով, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համապատասխան և հիմք ընդունելով հրավերի 8.6 և 8.7 կետերը, որոշվել էր «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել և հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել բանակցությունների (ոչ ավտոմատ ծանուցում՝ armeps համակարգի միջոցով):

Բանակցությունների օրը՝ 26.07.19թ. ժամը 17:00:

Բանակցություններին մասնակցում էին «Տելիա-Մեդ», «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ների և «Лиртон Групп» լիազորված ներկայացուցիչները:

Բանակցությունների արդյունքում «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ը և «Лиртон Групп»-ի վերանայեցին (իջեցրեցին) իրենց գները և ներկայացրեցին նոր գնային առաջարկներ:

Միաժամանակ, բանակցությունների ընթացքում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ը ձայնի իրավունք խնդրեց և ներկայացրեց իր դիրքորոշումները, մասնավորապես.

1. Համաձայն գործող ՀՀ օրենսդրության պահանջների, սույն ընթացակարգի գնման առարկան ազատված է ԱԱՀ-ից, ուստի ըստ վերջինիս մասնակիցները պետք է գնային առաջարկները ներկայացնեին առանց ԱԱՀ, հետևաբար ըստ ներկայացուցիչի կազմակերպությունները ներկայացրել են սխալ գնային առաջարկներ («Տելիա Մեդ» ՓԲԸ-ը և «Лиртон Групп»-ը գնային առաջարկները ներկայացրել են ԱԱՀ-ով, իսկ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ը՝ առանց ԱԱՀ): Բացի այդ նա նշեց, որ իրենց գնային առաջարկը ավելի ցածր է:

2. Ըստ ներկայացուցիչի հայտարարմամբ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի կազմվել հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես գնային առաջարկում՝ Հավելված 2-ում առկա են ծածկագրի, տառերով գնային առաջարկի անհամապատասխանություններ:

Ներկայացված դիրքորոշումներին գնահատող հանձնաժողովն ունի իր պարզաբանումը, մասնավորապես.

1-ին հարցի մասով՝ գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը չի դիտարկում մասնակցի կողմից ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ-ով գնային առաջակ ներկայացնելը կամ դրա արժանահավատությունը: Այլ գնահատում է այն ինչը ներկայացնում է մասնակիցը՝ իր կողմից հաստատված: Բացի այդ, եթե դիտարկենք մասնակիցների առանց ԱԱՀ-ի գնային առաջարկները, ապա «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի գնային առաջարկները ավելի ցածր չեն, ինչպես որ ներկայացուցիչն է հայտարարում:

2-րդ հարցի մասով՝ հայտարարված անհամապատասխանությունները, ըստ գնահատող հանձնաժողովի, զուտ տեխնիկական վրիպակներ են, որի պատճառով հայտը չի կարող մերժվել: Մասնավորապես, ծածկագրի անհամապատասխանության մասով. հաշվի առնելով, որ գնման ընթացակարգը էլեկտրոնային է և համակարգում կցվում են տվյալ ընթացակարգի (ծածկագրով) փաստաթղթերը, ուստի գնային առաջարկի միայն մեկ տեղում (հավելվածում ծածկագիրը ճիշտ է նշված) թերի ծածկագրի նշելը չի կարող մերժման հիմք հանդիսանալ: Այսինքն, ըստ գնահատող հանձնաժողովի, թղթային մրցույթի դեպքում հնարավոր էր տվյալ թերացումը լիներ մերժման պատճառ, բայց ոչ էլեկտրոնային մրցույթի դեպքում: Տառերով գնային առաջարկի անհամապատասխանության մասով, գնահատող հանձնաժողովը, ըստ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների, դիտարկում է միայն գնային առաջարկների տառերով և թվերով համապատասխանությունը, այլ ոչ թե տառասխալները կամ վրիպակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Մ.Մխիթարյան)

Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում է կից Հավելվածով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2016/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին՝ 1,2,3,4 չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը. **որոշվեց** առաջարկել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին 3 աշխատանքային օրվա ընթացքում (վերջնաժամկետը՝ 01.08.19թ. ժամը 18:00) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը. **որոշվեց** ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց և ՀՀ ՊԵԿ եզրակացությունը ստանալուց հետո :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա. Գևորգյան

---------- Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

Հավելված

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներ

Մինչև բանակցությունները

Հ/Հ	CPV	Անվանում	Քանակ	«Տելիա-Մեդ» ՓԲԸ					ООО "Лиртон Групп"					«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ				
				Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով
1	34111220/510	Ռեանիմոբիլ 1	3	89,482,500	17,896,500	107,379,000	29,827,500.00	35,793,000.00	87,768,000.00	17,553,600.00	105,321,600	29,256,000.00	35,107,200.00	95,400,000.00	0.00	95,400,000	31,800,000.00	31,800,000.00
2	34111220/501	Գծային տիպի շտապօգնության մեքենա 1	7	163,978,500	32,795,700	196,774,200	23,425,500.00	28,110,600.00	172,521,160.00	34,504,232.00	207,025,392	24,645,880.00	29,575,056.00	193,844,000.00	0.00	193,844,000	27,692,000.00	27,692,000.00
3	34111220/512	Ռեանիմոբիլ 2	3	88,609,500	17,721,900	106,331,400	29,536,500.00	35,443,800.00	88,119,360.00	17,623,872.00	105,743,232	29,373,120.00	35,247,744.00	93,744,000.00	0.00	93,744,000	31,248,000.00	31,248,000.00
4	34111220/511	Գծային տիպի շտապօգնության մեքենա 2	7	161,941,500	32,388,300	194,329,800	23,134,500.00	27,761,400.00	176,715,000.00	35,343,000.00	212,058,000	25,245,000.00	30,294,000.00	196,350,000.00	0.00	196,350,000	28,050,000.00	28,050,000.00

Բանակցություններից հետո

Հ/Հ	CPV	Անվանում	Քանակ	«Տելիա-Մեդ» ՓԲԸ					ООО "Лиртон Групп"					«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ				
				Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով
1	34111220/510	Ռեանիմոբիլ 1	3	87,125,000	17,425,000	104,550,000	29,041,666.67	34,850,000.00	87,333,000	17,467,000	104,800,000	29,111,000.00	34,933,333.33	95,400,000.00	0.00	95,400,000	31,800,000.00	31,800,000.00
2	34111220/501	Գծային տիպի շտապօգնության մեքենա 1	7	159,416,667	31,883,333	191,300,000	22,773,809.57	27,328,571.43	159,839,333	31,960,667	191,800,000	22,834,190.43	27,400,000.00	193,844,000.00	0.00	193,844,000	27,692,000.00	27,692,000.00
3	34111220/512	Ռեանիմոբիլ 2	3	86,291,667	17,258,333	103,550,000	28,763,889.00	34,516,666.67	86,500,000	17,300,000	103,800,000	28,833,333.33	34,600,000.00	93,744,000.00	0.00	93,744,000	31,248,000.00	31,248,000.00
4	34111220/511	Գծային տիպի շտապօգնության մեքենա 2	7	160,250,000	32,050,000	192,300,000	22,892,857.14	27,471,428.57	160,666,666	32,133,334	192,800,000	22,952,380.86	27,542,857.14	196,350,000.00	0.00	196,350,000	28,050,000.00	28,050,000.00

5/5